

## Դավիթ Ափինյան

Յայաստամի հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ

### ՈՌՍՎԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԲԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԽՄՐՄ ԿԱԶՄԱԼՈՒԾՄԱՆ ՍԿՁԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ընդհանրապես Յարավային Կովկասին մեծ կարևորություն է տրվում հատկապես ազդեցության գոտիների վերածնավորման համատեքստում: Այս առումով Ռուսաստանի հետաքրքրությունը տարբեր ժամանակներում եղել է բազմարովանդակ: Պաշտպանական գործառույթներից զատ, ռուսական ռազմավարական միտքը տարրածաշրջանը դիտարկում էր նաև որպես դարպաս իր հետագա աշխարհաքաղաքական ընդարձակման համար:

Խորհրդային Միության վիլուգումից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության գերխնդիրներից մեկը դարձավ իր ազդեցության պահպանման և ամրապնդման հիմնահարցը, ինչպես Կովկաս-Կասպյան տարածաշրջանում, այդպես էլ ողջ ԱՊՀ-ում:

Նշենք, որ հակամարտությունները Յարավային Կովկասի տարածաշրջանում Ռուսաստանի ու Արևմուտքի միջև սկսվել էին դեռևս 19-րդ դարում: Այն ժամանակվա համաշխարհային գերտերության կարգավիճակում հանդես եկող Բրիտանական կայսրությունը Կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի ռազմավարական գորաշարժը արգելափակելու մարտավարություն էր իրականացնում:

Իրավամբ արևանտյան ռազմավարներն այն կարծիքին էին, որ Ռուսաստանի և նրա տարածքների վրա անկարելի կլինի հսկողություն հաստատել, եթե Կովկասյան և Կասպյան տարածաշրջանները դուրս լինեն արևանտյան ենթությունների վերահսկողությունից: Ուշագրավ փաստ է, որ դեռ 1918 թ. բրիտանական եքսպեդիցիոն կորպուսի ջանքերով Կասպից ծովի ավագանում հսկողություն սահմանելու նպատակով լրված ռուսապատկան նավերից ստեղծվեց «Թագավորական կասպյան ռազմական նավատորմ»: Բարպից նավթի անխափան առաքումները կազմակերպելու համար Անգլիան 1919-1920 թթ. իր վերահսկողությանը ենթարկեց Վրաստանի՝ Բաթումի և Փորի սևծովյան նավահանգիստները: Սակայն տարածաշրջանում Լոնդոնի հաջողությունները երկարատև չեն, և շուտով Մեծ Բրիտանիա-Ռուսաստան աշխարհաքաղաքական վեճը լուծվեց վերջինիս օգտին:

ԽՄՐՄ-ի վիլուգումից հետո Կովկասում առաջ եկավ նոր իրավիճակ, որտեղ գերակյայող դիրքեր ունենալու ձգտումներ դրսնորեցին ԱՄՍ-ի կողմից գլխավորվող արևանտյան բլոկի երկրները:

1991 թ. մայիսին նորանկախ Վրաստանի առաջին նախագահ ընտրվեց նախկին այլախոհ Զվիադ Գամսախուրդիան: Ինչպես նախկին ԽՄՐՄ մյուս հանրապետություններից շատերը, այդպես էլ Վրաստանը որդեգրեց Ռուսաստանից հնարավորինս օտարվելու և սեփական ինքնությունը վերագրուելու մարտավարություն:

Կոմունիստական անցյալից վերջնականապես ձերբազատվելու և անկախություն կերտելու ցանկությունը Վրացական իշխանություններին կանգնեցրեց լրջագույն մարտահրավերների առջև: Նորաստեղծ պետության թիվ մեկ հիմնախնդիրը դար-

ձավ խորհրդային ազգային քաղաքականության արդյունքում ստեղծված վրացական «մինի կայսրության» տարածքային ամբողջականության պահպանումը:

Ինչպես և սովորաբար լինում է բռնակցված տարածքների հետ, այդպես էլ այս պարագայում համամիութենական վերահսկողության թուլանալուն զուգընթաց Վրաստանը բախվեց կենտրոնախույս ծգտումների առավել աշխուժացնան հետ, որոնք անուղղակի «խրախուսվում» էին «Վրաստանը վրացիների համար» և նաև անտիպ ազգայնամոլական հայտարարություններով և քաղաքականությամբ:

Իր նախկին ինքնավարություններից երկուսի հետ մարտական գործողությունների բռնված թթիլիսին հայտնվեց սոցիալ-քաղաքական ծանրագույն իրավիճակում: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ նրա հանդեպ, առավելապես տնտեսական միասնության տեսակետից, անհնազանդություն դրսերեց Ազարիայի հնքնավար Հանրապետությունը, որն իր գործողություններում անտեսում էր Թթիլիսիի կարծիքը, սակայն միաժամանակ խուսափեց բացահայտ անկախացնան գործողություններ ծավալելուց:

Հարկ է նշել, որ Զ. Գամսախուրդիայի կառավարման շրջանը Վրաստանի պատմության մեջ նշանավորվեց տնտեսական անկմանը, ներքին մարտական գործողություններով և հակառակական արտաքին քաղաքականությամբ: Այսպիսի խառն իրավիճակում Մոսկվայի օժանդակությանը 1992 թ. հունվարին վրացական ընդդիմությունը էղ. Շևարդնաձեի գլխավորությամբ կարողացավ տապալել Զ. Գամսախուրդիայի իշխանությունը և համեմատաբար հանդարտեցնել երկորի ներքին իրավիճակը:

Կարելի է ենթադրել, որ Վրաստանի առաջին նախագահի ազգայնամոլական վարքագիծն ու հակառականությունը մտահոգում էր Մոսկվային, որը եռանդուն փնտրությունը էր սկսել Զ. Գամսախուրդիայի փոխարեն՝ ՈԴ հանդեպ համեմատաբար լոյալ տրամադրված քաղաքական գործիչ փնտրելու համար: Ուշագրավ է, որ Զ. Գամսախուրդիան իր վարած ազգայնամոլական քաղաքականության պատճառով չէր վայելում Արևմուտքի համակրանքը, և դա էր այն հիմնական պատճառը, որ ԱՄՍ-ն սահեցրեց նրա ռեժիմի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գործընթացը: Ի տարբերություն Զ. Գամսախուրդիայի, հավասարակշռված և քաղաքական մեծ փորձառություն ու ճանաչում ունեցող ԽՍՀՄ վերջին արտգործնախարար էղ. Շևարդնաձեն ընդունելի էր ինչպես ՈԴ-ում, այնպես էլ Արևմուտքում:

Այսպիսով, 1992 թ. իշխանափոխությունից հետո նույն քվականի հունիսի 25-ին Սոչիում, Մոսկվայի նախաձեռնությամբ, Վրաստանի Պետխորհրդի ղեկավար էղ. Շևարդնաձեի և ՈԴ նախագահ Բ. Ելցինի միջև ստորագրվեց «Վրաց-օսական հակամարտության խաղաղ կարգավորման սկզբունքների վերաբերյալ» համաձայնագիր, որով դադարեցվեցին ռազմական գործողությունները վերջինների միջև, իսկ վրաց-օսական շիման գծում տեղակայվեցին ռուս-վրաց-օսական համատեղ խաղաղապահ ուժեր<sup>1</sup>:

Համոզնությունով կարելի է պնդել, որ Վրաստանի Պետխորհրդը, հենց վրաց-օսական հակամարտության արդյունքներից և Արևմուտքի հնքնավար Հանրապետությունում ընթացող անկախացնան գործընթացներից ահաբեկված, 1992 թ. օգոստոսի 14-ին սկսեց Սուխումին հնազանդեցնելու համեմատաբար լավ նախապատ-

<sup>1</sup>Տես «Дипломатический вестник», 21 ноября, 1992:

րաստած «Սուր» մարտական օպերացիան: Վրացական զինված ուժերին կարճ ժամանակում հաջողվեց նվաճել մայրաքաղաք Սուխումին և վերահսկողություն հաստատել գորեք ողջ Աբխազիայի վրա:

Ուշագրավ է, որ Աբխազական կամպանիայի սկզբնական շրջանում ՈԴ քաղաքական դեկավարությունում առկա էին հակակշիռ թևեր, որոնցից մեկը գիշավորում էր եղ. Շևարդնաձեին, որպես քաղաքական գործի, իր միակ դաշնակիցը համարող ՈԴ նախագահ Բ. Ելցինը, իսկ մյուսը՝ դեկավարում էր այդ հարցում առավելապես պրո-աբխազական հայացքներ ունեցող ՈԴ Գերագույն խորհրդի նախագահ Ռ. Խազբուլատովը:

Մեկ տարի մեկ ամիս տևած ռազմական գործողություններն ավարտվեցին Աբխազիայի ազատագրմամբ և աբխազական դիմադրության հաղթանակով, որի արդյունքները ՈԴ-ի ակտիվ միջնորդությամբ ամրագրվեցին 1993 թ. Սոչիում ՈԴ արտգործնախարար Կոզիրկի, Վրաստանի խորհրդարանի խոսնակ Գոգուածեի և Աբխազիայի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Զինջոլիայի՝ «Աբխազիայում կրակի դադարեցման և հրադադարի ռեժիմի պահպանման վերաբերյալ» համաձայնագրով: Վերջինս վերահստատվեց նույն թվականի օգոստոսի 23-24-ը Բ. Ելցինի, եղ. Շևարդնաձեի և Վ. Արձինբայի՝ Մոսկվայում կայացած հանդիպման ժամանակ<sup>1</sup>:

Աբխազական ճակատում ունեցած անհաջողությունը դարձավ այն հիմնական պատճառներից մեկը, որի արդյունքում 1993 թ. Վրաստանի խորհրդարանը որոշում ընդունեց Երկրից դուրս բերել ՈԴ հարավկովկասյան զորախմբի ստորաբաժանումները, որոնց թիվին մեղադրում էր աբխազներին աջակցելու համար<sup>2</sup>:

Այդ ժամանակ, օգտվելով իշխանությունների թուլությունից, ինչպես նաև վրացական զորքերի աբխազական ճակատում կրած պարտությունից՝ 1993 թ. սեպտեմբերին Մեգրելիայում\* Երկրի նախկին նախագահ Զ. Գամսախուրդիայի կողմնակիցները ապստամբեցին ընդդեմ կենտրոնական իշխանության: Իշխանությունը կորցնելու վտանգը ունենալով՝ Մոսկվա մեկնած էղ. Շևարդնաձեն 1993 թ. հոկտեմբերի 8-ին հայտարարեց, որ իր Երկիրը պատրաստ է անդամակցել ԱՊՀ-ին<sup>3</sup>: Դեռ ավելին, քաղաքական կուրսի կտրուկ շրջադարձ կատարած էղ. Շևարդնաձեն համաձայնեց մասնակցել ԱՊՀ արտաքին սահմանների համատեղ պաշտպանությանը, ինչպես նաև Վրաստանի տարածքում թողնել ռուսական զորախումբը մինչև 1995 թ<sup>4</sup>: Մոսկվան պաշտոնապես ստանալով Վրաստանում իր ռազմական ներկայության հստակ երաշխիքներ՝ 1993 թ. նոյեմբերի 4-ին Փոքրիում ափ հանեց դեսանտայիններին և ռազմական տեխնիկան, իսկ արդեն նոյեմբերի 8-ին ռուսական զորակազմը վերահսկողության տակ առավ ապստամբների հսկողության տակ գտնվող հաղորդուղիներն ու նրանց վերջին հենակետ համարվող Զուգդիդի քաղաքը: Այսպիսով, եղ. Շևարդնաձեն, շնորհիվ ռուսական գործոնի հնուտ օգտագործման, կարողացավ պահպանել իր իշխանությունը և որոշակի միջոցառումներ իրականացնել Երկրի ներքին իրավիճակը հանդարտեցնելու ուղղությանը:

Այս շրջանում Մոսկվայի և Թիվլիսի մերձեցման բարձրակետը դարձավ 1994 թ. փետրվարի 3-ին ռուս-վրացական «Յամագրոծակցության և բարիդրացիական հա-

<sup>1</sup> Տես նույնը, № 11, հունիս 1993:

<sup>2</sup> Տես «Российские вести», 2 декабря, 1993:

\* Պատմական մարզ Արևմտյան Վրաստանում:

<sup>3</sup> Տես «Независимая газета», 22 сентября, 1993:

<sup>4</sup> Տես նույնը:

րաբերությունների մասին» պայմանագիրը, որը բովանդակում էր նաև ռազմական համագործակցության մասին ենթակետ: Վերջինիս համաձայն պայմանավորվող կողմերը պարտավորվեցին սեփական երկրում տարածք չտրամադրել երրորդ երկրների ռազմությին, ինչպես նաև չներգրավվել միմյանց դեմ ուղղված ռազմաքաղաքական դաշինքներում<sup>1</sup>: Վերոգրյալը փաստում էր Մոսկվայի հեռանկարային և Թբիլիսիի կարճաժամկետ հետաքրքրությունների համընկաման մասին, որով առաջինը փորձում էր ապահովել իր ներկայությունը, խոչընդոտել Վրաստանում Թուրքիայի և Արևմուտքի ռազմաքաղաքական ծրագրերի կյանքի կոչմանը, իսկ երկրորդը՝ վերականգնել տարածքային անբողջականությունն ու փրկել սեփական իշխանությունը:

Ոուս-Վրացական այս հարաբերությունները երկար չտևեցին և աստիճանական անկում ապրեցին՝ սկսած 1995 թ.-ից՝ կապված Թբիլիսիի՝ Մոսկվայից տարածքային ամբողջականության վերականգնման և ոուսական կապիտալի լայնամասշտար ներհոսքի չարդարացված հոլուսերի հետ։ Հավանաբար, Մոսկվայում գիտակցում էին, որ Թբիլիսիին, առանց մեծածավալ կապիտալ ներդրումների, միայն ռազմական բաղադրյալով երկար հնարավոր չէ «պահել», հատկապես այն պարագայում, որ վերջինս «գնալու տեղ» իրոք ուներ, այն էլ՝ արևմտյան շահագրգիռ տերությունների ակտիվ ներգործության պայմաններում։ Ծնորհիվ աշխարհագրական դիրքի հենց Վրաստանին եր վիճակված դառնալու Հարավային Կովկասում Արևմուտքի ազդեցության հաստատման ու ամրապնդման ավանդարդ։

Այսպիսով, իր աշխարհագրական դիրքով Վրաստանը շահեկանորեն առանձնանում է տարածաշրջանի իր հարևաններից, ինչը նրան լրացուցիչ կշիռ է հաղորդում: Դա կարևոր է այնքանով, որ շնորհիկ Թթիլիսիի արևմտյան պետություններն ու Կորպորացիաները ստանում են ելքի հնարավորություն դեպի Ալբերժան, այնտեղից էլ Կենտրոնական Ասիայի երկրներ՝ շրջանցելով Ռուսաստանն ու Իրանը: Հարկ է ընդգծել, որ Վրաստանն իր աշխարհագրական դիրքով Արևմուտքի համար հանդիսանում է «Կովկասյան միջանցքի» առաջին պետությունը, որում քաղաքական և տնտեսական գերակայություն ապահովողին հնարավորություն է զննելով ծանրակշիռ ազդեցություն ունենալ նաև ողջ Հարավային Կովկասում:

Վրաստանի շուրջ ԱՄՆ-ի ուսաստան մրցապայքարում Վաշինգտոնի նպատակն էր վերահսկել այդ երկիրը, ինչպես նաև կառուցել դեպի Սուվաս ձգվող նավթամուղը՝ հետագայում մասնակցելով դեպի Թուրքիա նոր խողովակաշերի կառուցմանը, ինչպես նաև լայնորեն օգտագործել Վրաստանի տարանցիկ հնարավորությունները: Ստացվում էր այնպես, որ ԱՄՆ-ին հարկավոր էր Վրաստանը որպես իր կողմից վերահսկվող տարածք, որտեղով նա կկարողանար Կասպից ծովի նավբն ու գազը տեղափոխել Արևմուտք առանց ՈՂ միջնորդության:

Եներգետիկ քաղաքականության հարցում արևանուտքի տարածաշրջանային շահերի պաշտպանությունը Վրաստանի ղեկավարությունը դիտարկում էր որպես գըլխավոր նախապայման՝ սեփական իշխանության և Վրաստանի անվտանգության պահպանման, Ուլսաստանից կախվածության նվազեցման համար: Եներգետիկ միջանցքի հարցերն էին այն հիմնական խնդիրները, որոնց լուծման համար Արևանուտքը՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ, կարևորում էր Վրաստանի դերը տարածաշրջանում:

<sup>1</sup> Ст. «Свободная Грузия», 4 февраля, 1994:

Այսպիսով, Վրաստանը Արևմուտքի տարածաշրջանային քաղաքականության ոչ թե նպատակն էր, այլ ընդամենը միջոցը՝ տարածաշրջանից ՌԴ-ին դուրս մղելու գործում:

ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելու տրամաբանության զարգացմանն ի հետամուտ՝ արևմտյան նոր աշխարհակարգի ճարտարապետները անում էին ամեն հնարավորը, որ սահմանափակեն ու «հեռու պահեն» Ռուսաստանին 21-րդ դարի Եվրասիական տրանսպորտային նախագծերից: Դա նախատեսվում էր իրականացնել նաև «TRACECA»\* Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային ծրագրով, որը մշակվել էր Եվրոպական հանձնաժողովի կողմից դեռևս 1991 թ.-ին: 1993-ին Բյուլետինը կայացած Եվրամիության խորհրդաժողովի ժամանակ որոշվեց «TRACECA»-ն կյանքի կոչել դեռևս 1991-ից գործող Եվրամիության TACIS<sup>†</sup> ծրագրի միջոցով:

Խորհրդաժողովի աշխատանքների ժամանակ վերջինիս անդամագրվեցին Հայաստանը, Վրաստանը, Ադրբեյջանը, Տաջիկստանը, Ղազախստանը և Ուզբեկստանը, իսկ քիչ անց «TRACECA»-ին միացան նաև Ուկրաինան, Թուրքմենստանը, Մոնղոլիան, ինչպես նաև Մոլդովան և Իրանը, սակայն միայն դիտորդի կարգավիճակով<sup>‡</sup>: Ծնորհիվ աշխարհագրական դիրքի և բնական պաշարների Վրաստանն ու Ադրբեյջանը Արևմուտքի համար դարձան Կովկասյան միջանցքի առաջապահ երկրներ:

Նորօրյա «Մետաքսի ճանապարհը» ձգվելու էր Եվրոպայից Թուրքիա, այնտեղից Վրաստան, Ադրբեյջան, Կենտրոնական Ասիայի երկրներ, Չինաստան, իսկ ապա՝ Աֆղանստան և Հարավարևելյան Ասիայի երկրներ: Յետագայում այս նախագիծը ենթարկվեց շտկումների և որպես ելակետ ընդունվեցին Բուլղարիայի, Ռումինիայի և Ուկրաինայի սեծովյա նավահանգիստները՝ Վառնան, Կոստանցան, Օդեսան, որոնք լաստանավային երթուղիով պիտի կապվեին վրացական Փոքրի և Բարումի նավահանգիստներին, որտեղից էլ ճանապարհը շարունակվելու էր ըստ նախագիծի<sup>‡</sup>: Ինչպես երևում է, երկու դեպքերում էլ Վրաստանի դերը ամենակին էլ չի երկրորդվում:

«Մետաքսի ճանապարհի» վերագործարկման ամենաազդեցիկ խթաններից մեկը դարձավ Կասպիական և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների ածխաջրածնային պաշարների առատությունը, որոնք պիտի ապահովեին արևմտյան մի շարք երկրների էներգետիկ անվտանգությունը, ինչպես նաև խոշնդրութեան Մոսկվայի կողմից աշխարհատնտեսական հզոր լծակներին տիրանալու ձգտումը, ինչը միաժամանակ կրուլացներ Ռուսաստանի ռազմաքաղաքական ազդեցության հնարավոր ընդարձակումն ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում:

Պաշտոնական թթիլիսիում գերակայում էր այն կարծիքը, որ Վրաստանով անցնող և ՌԴ տարածքը շրջանցող խողովակաշարային և տրանսպորտային նախագծերն ունակ են կյանքի կոչելու Վրաստանի հավակնությունները՝ արևմտյան հետաքրքրությունների հարավկովայան կենտրոն դառնալու գործում: Ըստ վրացական քաղաքական շրջանակների պաշտոնական թթիլիսին կարող էին դարձնել «Արևմուտք-Արևելք» միջանցքի հիմնական դերակատար, ինչը կարող էր դրական

\* Transport Corridor Europe Caucasus Asia.

\* Technical Assistance for the Commonwealth of Independent States, Եվրամիության կողմից ԱՊՀ երկրներին տեխնիկական օժանդակության ծրագիր:

<sup>1</sup> Տես «The Wall Street Journal», Europ. 2 Februar 1994:

<sup>2</sup> Տես նույնը:

անդրադարձ ունենալ Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման գործընթացի վրա<sup>1</sup>:

Սյուս կողմից՝ Թբիլիսին զգտում էր դիվերսիֆիկացնել էներգակիրների ներկրումը, ինչը նրան հնարավորություն կը նետեր նվազեցնել էներգետիկ կախվածությունը Ուլսաստանից: Այս հանգանաբը զարգացման հեռանկարի հույս տվեց Վրացական Սուվիսա, Փորի և Բաթումի նավահանգիստներին: 1995 թ. «Նավթարոյունահանման միջազգային ընկերակցությունը» որոշում կայացրեց Ադրբեյջանից հուն նավթի արտահանման նպատակով օգտագործել հիշյալ նավահանգիստների հնարավորությունները, ինչի արդյունքում 1996 թ. վրացական իշխանությունների հետ համաձայնություն ձեռք բերվեց Բաքու-Սուվիսա 837 կմ. նավթախողովակաշարի կառուցման մասին, իսկ 1999 թ. ապրիլի 17-ին շահագործման հանձնված խողովակային տրանսպորտով արտահանվեց հուն նավթի առաջին խմբաքանակը<sup>2</sup>: Այս նախագծին զուգընթաց շահագործման հանձնվեցին նաև Սուվիսայի նավթային պահեստարանն ու Վառա-Իլիչևսկ-Փորի-Բաթումի լաստանավային անցուղին, որը կազմում էր «TRACECA» ծրագրի բաղադրյալը<sup>3</sup>:

Հետամուտ լինելով քաղաքական և տնտեսական ծրագրերին՝ 1994 թ. Փորի և Իլիչևսկի միջև հաստատվեց լաստանավային հաղորդակցություն, որն իր գործունեության նախնական շրջանում անկարող էր ապահովել նույնիսկ իր սեփական ծախսերը և գոյատեսում էր շնորհիվ արևմտյան դուտացիաների: Ուշագրավ է, որ շահութաբեր ձեռնարկություն դառնալու գործում նրան մեծապես նպաստեց նաև դեպի Յայաստան եկող բեռների սպասարկման գործառույթի ստանձնումը: Լաստանավային երթուղու հանդիսավոր բացման արարողության ժամանակ նախագահ էր Շևարդնաձեն ընդգծեց, որ Վրաստանի և Ուկրաինայի միջև հաղորդակցությունը կարևոր է ոչ միայն առաջինի, այլև Կենտրոնական Ասիայի և մերձանության ու բալքան երկրների համար<sup>4</sup>:

Ծրագրի կայացման գործում կարևորվում էր նաև երկարուղային տրանսպորտի զարգացման հիմնախնդիրը, համաձայն որի վերագործարկվեց Բաքու-Թբիլիսի-Փորի երկարուղին, որով էլ հիմնականում իրականացվում էին նավթային առաքումները՝ խոշորածավալ գլանատակառներով<sup>5</sup>:

Վրաստանն ի սկզբանե հանդես էր գալիս Բաքու-Թբիլիսի-Ձեյհան ծրագրի օգտին, սակայն կասկածներ ուներ թուրքական ուղու կյանքի կոչման վերաբերյալ: Յատկանշական է, որ պաշտոնական Թբիլիսին իր աջակցությունը հայտնեց նաև Կասպիական նավթի՝ Ուկրաինայի տարածքով հնարավոր առաքումը իրականացնելու ծրագրին, որն ամրագրվել էր 1997 թ. մարտի 24-ին «Նավթագազային ոլորտում համագործակցելու վերաբերյալ» պայմանագրով<sup>6</sup>: Այս քայլով Ուկրաինան նպատակ ուներ դիվերսիֆիկացիայի ենթարկել էներգակիրների ներկրումը՝ նվազեցնելով Ուլսաստանից էներգահումքային կախվածությունը: Միաժամանակ նա էլ, իր հերթին, ձգտում էր ստանձնել կասպիական և Կենտրոնական Ասիայի մշակված նավթի արտահանման տարանցիկ երկրի կարգավիճակը, որի շնորհիվ հնարավոր

<sup>1</sup> Տես «Свободная Грузия», 15 марта, 1994:

<sup>2</sup> Տես Жильцов С. С., Зонн И. С., Ушаков А. М., Геополитика Каспийского региона. М., 2003, с. 116:

<sup>3</sup> Տես «Свободная Грузия» 9 января 1999:

<sup>4</sup> Տես նույնը, 19 ապրիլի 1999:

<sup>5</sup> Տես Жильцов С. С., Зонн И. С., Ушаков А. М., Геополитика Каспийского региона, М., 2003, с. 16:

<sup>6</sup> Տես «Порты Украины», № 3., 1998 г.:

էր, որ իրականություն դառնային Ուկրաինան տարածաշրջանային գերտերության վերածվելու Կիևի նկրտումները:

Դավելենք, որ ազգային ինքնության փնտրություն ու Ռուսաստանի կողմից ընդհանուր «հալածյալի բարդույթը» թե՛ Կիևի և թե՛ Թբիլիսիի համար համագործակցության ընդհանուր եզրեր էին ստեղծում:

Ռուսաստանը ռազմավարական տեսակետից լուրջ մտավախություններ ուներ հիշյալ ծրագրերը կյանքի կոչելու կապակցությամբ, քանզի պարզորոշ նշանակում էին «գերիսկային» դեպի հյուսիս և արևելք «սեղմելու» արևմտյան երկրների նպատակները: Դա էր այն իհմնական պատճառներից մեկը, որից ազդված Ռուսաստանի Դաշնությունը տարբեր ատյաններում փորձում էր համոզել, որ արևելք-արևմուտք փոխադրումների համար առավելապես արդարացված է ռուսական ճանապարհների օգտագործումը: Այս մրցակցությունը Վրաստանին ստիպում էր կոշտացնել Մոսկվայի հասցեին ուղղված գնահատականները, իսկ Վերջինս էլ ակտիվացնում էր իր «քեատակից» դեպի Արևմուտք «սողացող» հանրապետության տարածքային ամբողջականության հետ կապված քաղաքական ու տնտեսական մանհպուլյացիաները:

1998 թ. Բաքվում TRACECA-ի իհմնախնդիրներին նվիրված համաժողովում նախագահ էղ. Շևարդնաձեն հայտարարեց, որ Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքը միակ իհմնավոր հենայունն է Վրաստանի փաստացի անկախության կերտման և տարածքային ամբողջականության վերականգնման համար, ինչն ամեն կերպ խոչընդոտում են հաղորդուղիների մեջաշնորհի ծգտող պետությունները<sup>1</sup>: Ակնհայտ է, որ այս մեղադրանք-հայտարարությունը ուղղված էր Ռուսաստանին, քանզի, Թբիլիսիի կարծիքով Վրաստանի տարածքային մասնատվածության պահպանման ծպտյալ երաշխավորը շարունակում էր մնալ նրա հյուսիսային հարեանը:

Ուշագրավ է, որ 2000 թ.-ին պաշտոնական Թբիլիսին հանդես եկավ Մոսկվային ուղղված առաջարկով՝ կոչ անելով միանալ TRACECA-ին, սակայն միայն հյուսիս-հարավ ուղղությամբ: Այս առաջարկը հետապնդում էր իհմնականում երեք նպատակ՝ որոշակիորեն մեջմել վրաց-ռուսական լարված հարաբերությունները, շահել տարանցիկության հաշվին և Մոսկվայի հավանական մերժման դեպքում նրա դեմ, հարկ եղած դեպքում, իրականացնել շահարկումների մարտավարություն:

Բանն այն է, որ Թբիլիսին Մոսկվայի ներգրավվածության «հանաձայնություն» տալը նախատեսում էր միայն արխազական և հարավ-օսական իհմնախնդիրների լուծումից հետո: Դատկանշական է, որ Ռուսաստանում հստակ գիտակցում և պլանավորում էին իրենց գործողությունները Թբիլիսիի հակառական դրսերումների խորացման պարագայում, ինչի առաջին ազդակը դարձավ վրացական ինքնահոչակ հանրապետությունների բնակչություն Մոսկվայի կողմից ռուսահպատակության վկայագրերի զանգվածային շնորհումը: Այս ամենը, հետագայում, իրավական դաշտում պետք է պահեր Մոսկվայի տարածաշրջանային ներկայությանը միտված հակադման գործողությունների օրինականությունը:

<sup>1</sup>Տես «Свободная Грузия», 9 сентябрь 1998 г.:

*Давид Апинян, Внешняя политика России в Грузии в период распада СССР* - Представляет внутриполитическую ситуацию в Грузии, а также анализирует политику России, направленную на подтверждение и укрепление своих позиций в этой стране.

*David Apinyan, Russian Foreign Policy in Georgia during the collapse of the USSR* - presents the political situation in Georgia as well as the Russian policy, aimed at sustaining and strengthening its position in this country.

